


ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Ե
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՏԻԼ ԳՆԱԻՄ




Ի Բ Ե Լ Ի Ս
1930

62000
1-61

04 AUG 2010

628.4



ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Ե
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՏԻԼ ԳՆՈՒՄ



Տ Ի Յ Լ Ի Ս
1930 թ.



43564.63

ԻՆՉՈՒ ՅԵ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՏԻԼ ԳՆՈՒՄ:

ԻՆՉ ԲԱՆ Ե ՈՒՏԻԼԸ

Մոտ ժամանակներում Խորհրդային Միության մեջ «ուտիլ» բառը անձանոթ մի հասկացողություն էր շատ շատերի համար:

Վերջին տարիներս ե միայն, վոր ավելի հաճախ ե կրկնվում այդ բառը: Ուտիլի մասին գրում են լրագրողներում, յերբեմն այդ բառը լսվում ե ուղիորդում, հաճախ ժողովների քննության առարկա յե դառնում այդ հարցը, պլակատներ են կաղմում, թերթիկներ լույս տեսնում ուտիլի մասին:

Ի՞նչ ե ուրեմն ուտիլը:

Ուտիլ են կոչվում այն բոլոր «ավելորդ», «անպետք», բայց իրոք շատ արժեքավոր իրերը, վոր դեն են չլուրջում տանը, դյուղատնտեսության մեջ, տնայնագործական արտեղներում, գործարաններում, տրանսպորտում և այլն:

Ամեն տեղ, վորտեղ միայն ապրում ե կամ աշխատում մարդը, յերևան են դալիս նման մնացորդներ, դեն ամած իրեր — թափթիուկներ, աղբ: Անհատական կամ կոլլեկտիվ ամեն մի տնտեսության մեջ չարունակ կուտակվում են այդ արժեքավոր թափթիուկները:

սրանք ավելորդ են ու անպետք այդ տնտեսությունների համար, որինսակ՝ հին փալատը, մաշված կրկնակուշիկները, պատառոտած քուրքը, թաղիքն, կամ այլ փուլացած վտանամանները, թոկի կտորները, կտավ մաներուց մնացած աղբը, խծուծ, վոսկոր մետաղի անպետք կտորներ և այլն:

Դաշտերում, արոտատեղերում կան սատկած անասունների բավական մեծ քանակությամբ վոսկորներ. ուտիլ են և այս վոսկորները: Քաղաքի ամեն մի բնակարան դեն և ածում չառ մեծ քանակությամբ անպետք թափթիուկներ՝ մաշված սպիտակեղեն կամ չոր, հին բեզին, արդեն կարգացած լրացիլ, փաթաթելու թուղթ, թոկի կտորներ, զանազան անոթներ, շշեր, խցաններ, ճաշից մնացած կերակուր, վոսկոր ու այլ անպետք իրեր—«խլաֆ»:

Ամեն մի գործարան կամ տնայնագործական արհեստանոց ամեն ոք տալիս և տարբեր թափթիուկներ, վորոնց վերամշակումը ձեռնտու չէ այդ ձեռնարկությունների համար:

Այդ կարգի արդյունաբերական թափթիուկներին ևն պատկանում «արտադրության կորուստը» (ուղարնոյե պրոիզվոդստվո), կամ «ուղարք», հին սպեց հագուստ, մաշված փոկեր, հրշեջային խողովակ, պատառոտած տոպրակներ, ու ջլալներ զանազան գործվածքների, թելերի կտորներ, հին թուղթ, մետաղներ և այլ շատ իրեր, վորոնք բոլորովին ավելորդ և անպետք են ավյալ ձեռնարկության համար:

Տրանսպորտի, կամ տեղափոխության միջոցների բոլոր տեսակները՝ նավերը, յերկաթուղադիծը, ավ-

տոմորելները, սայլերը, և այլն, նմանապես տալիս ևն տարբեր թափթիուկներ:

Ամեն մի խանութի, ճաշարանի, հիվանդանոցի, աղումբի, թեյատան մեջ կուտակվում են տարբեր տեսակի թափթիուկներ, վորոնք այդ հիմնարկությունների համար բոլորովին անպետք են:

Մի խոտքով, ամեն մի տան, խրճիթի, հիմնարկության մեջ կուտակվում են շատ արժեքավոր թափթիուկներ կամ աղբ:

Կուտակվում և այդ աղբը և փչանում: Չնչ վոր մենք սովոր ենք վոչ մի արժեք, վոչ մի նշանակություն չառ այդ աղբին:

Գեղջկուհիները կամ տանտիկիները, ինչպես և տարբեր ձեռնարկություններում աշխատող մարդիկ շարունակ աղբանոց են ածում այդ աղբը, վորտեղ նա փռում և, անողուտ կորչում, կամ այլովում վատարաններում:

Յերբ մենք այդպես ենք վարվում, մի բույե անգամ չենք ուղում մտածել, վոր ահագին վնաս ենք հասցնում մեր սոցիալիստական յերկրին:

Մենք մի բույե անգամ չենք ուղում մտածել, վոր այդ աղբը շատ մեծ արժեք ունի և վորպես հումուլթ և ծառայում մեր արդյունաբերության շատ և շատ ճյուղերին, վոր այդ աղբից մենք կարող ենք ստանալ բավական անհրաժեշտ, պետքական աղբանք, իսկ մի մասն ել արտահանել ոտար յերկրներ:

Այդ թափթիուկները կոչվում են «ուտիլ հումուլթ» («ուտիլիլե» ոտար բառ և և նշանակում և ոգտադործել):

Յեւ վորպեսզի կարողանանք ուղտադործել այդ աղբը, թափթփուկները, հարկավոր ե ժողովել այն:

Թափթփուկները կարելի չե ծախել: Ուտիլի ամեն մի տեսակին իր գինն ունի:

ՌԻՏԻԼԻ ՄԹԵՐՈՒՄՆ ՈՒ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Համարյա ամեն մի քաղաքում ե շատ խոշոր դյուղերում գոյություն ունեն հատուկ, մթերող պահեստներ, վորոնք ե գնում են ուտիլը:

Տարեց տարի այդ պահեստները թիվը մեծանում ե ե հեռու չե այն ժամանակը, յերբ համարյա ամեն մի անկյունում մենք կուենանք գոնե փոքրիկ պահեստներ:

Այս պահեստներում հատուկ մարդիկ կան, վորոնք հալաքող, ժողովող, կամ մթերող են կոչվում: Երանք ամեն կողմից ուտիլ են բերում, ժողովում պահեստներում:

Մթերումներն այս ուտիլը (աղբն ու թափթփուկները) պահեստին հանձնելուց առաջ տեսակների յեն բաժանում՝ փալառ, վոսկոր, մետաղ, թուղթ, շշեր ե այլն՝ առանձին - առանձին:

Փալառը նրանք բաժանում են մի շարք տեսակներ, վորովհետե ամեն մի կիլոգրամ մաքուր բրդյա փափուկ փալառի համար պահեստը վճարելու յե 20—50 կոպ., բրդյա փալառի համար, ալեւի քիչ, իսկ բրդախառն փալառի համար ել ալեւի պակաս: Տարբեր զին ունեն նաե չթի կտոմ քաթանի տարրեր փալառները:

Փալառի գներ վորոշում են նաե նրանով, թե վորչափ փալառը մաքուր ե, կամ դեռ շատ չի մաշված:

Վորչափ փալառը մաքուր ե կամ լավ պահված, այնչափ բարձր գին ունի նա: Յեցի կերած, փտած, խուռացած, ձեթոտած փալառները բրակ են հաշվվում ե ալեւի ե խառն գնահատվում: Այսպիսի փալառի ամեն մի կիլոգրամի համար 2½ կոպեկից ալեւի չեն վճարում:

Բացի այդ, թափթփուկների մեջ պատահում են չըթի ե քաթանի այնպիսի կտորներ, վորոնք իրենց մեծությամբ շատ հարմար են մեքենաներ մաքրելու համար: Այսպիսի կտորները «կարկատան», կամ «սրբիչ» են կոչվում ե կիլոգրամն արժե 20 կ.:

Մետաղներն ել տեսակների յեն բաժանվում — դեղին պղինձ, կարմիր պղինձ, կապար, ցինկ, ալյումին, յերկաթ, չուգուն ե այլն:

Մետաղներից առ այժմ չեն գնում եմալով ծածկված ամաններն ու ցինկով ծածկված յերկաթը, վորովհետե մենք դեռ ես չենք կարողանում ողտադործել նրման իւրամը:

Թուղթ գներին, մթերողներն ուշադրություն են դարձնում, վոր թղթերի մեջ յուլոտ, ձեթոտ թերթեր խառնված չլինեն, վորովհետե այդպիսի թուղթը վոչ միայն անպետք ե արտադրության համար, այլ նույն իսկ փչացնում ե սպրանքը:

Առևտրական կոմիտարիատն ամեն մի տեսակ ուտիլի համար վորոչ, հաստատ գին ունի սահմանած:

Այդ գները անպատճառ պետք ե կախված լինեն (պարտադիր ե) ամեն մի պահեստում:

Պահեստում ուտիլն աղտահանման ե յենթարկվում, (այսինքն այնպես են անում, վոր ուտիլից մարդիկ չվարակվեն, չհիվանդանան), այնուհետե մե-

մլում (աշխինքն մամուլով սեղմում են), կապում և հատուկ բաղանիք, կամ անմիջապես գործարաններ ուղարկում (վոսկոր, ուղին և այլն) :

Բաղանիք հասած ուտիլ հումուլթը յերկրորդ անգամ տեսակների յեն բաժանում և ուղարկում գործարաններ, կամ արտասահման վաճառելու համար :

Ամենահիմնական տեսակավորման և յենթարկիւմ փալասը :

Փալասը քանդում, մասերի յեն բաժանում. բրդի կտորներն առանձնացնում են բամբակի կտորներից, բամբակի կտորները քաթանից, հեռացնում են նաև կոճակները :

Այսպես են անում, վորովհետև արտադրությունը պահանջում է, վոր փալասի այս տեսակը խառնված չլինի մի ուրիշ տեսակի հետ :

Տեսակների չի բաժանվում միայն փալասի «Բլրակ» տեսակը, բայց քանից ել կոճակներն են հեռացնում : Փալասի կտորներն իրարից հեռացնելու ժամանակ (կարը քանդելիս) փալասի կտորները տեսակավորում են ըստ թելերի յերկարության, գույնի, մաքրության, գործվածքի թելի տեսակի (բուրդ, բամբակ և այլն) : Սրանից հետո ուտիլը նորից կտրվում են, մամլում և գործարաններ, կամ արտասահման ուղարկում :

Բոլոր տեսակի հին թղթերի, կամ լնչպես ասում են «մակուլատուրայի» համար կան հատուկ «մակուլատուրա տեսակավորող բաղանիք», վորտեղ հին թղթերը տեսակների յեն բաժանում ըստ գույնի և վորակի, նորից կտրվում և գործարաններ ուղարկում :

Մետաղի համար ել կան հատուկ բաղանիք, վորտեղ մետաղը տեսակավորվում է այնպիսի մասնագետների ձեռքով, վորոնք լավ ճանաչում են հարվածքների տարբեր տեսակները, իսկ սա շատ անհրաժեշտ է, քանի վոր հենց բաղանիքից է, վոր մետաղներն ուղարկվում են տարբեր ձուլարաններ :

Մետաղը տեսակների բաժանելիս պատահում են խոշոր կտորներ. այս կտորները հատուկ գործիքով մանրացնում են : Բացի այդ, տեսակավորման ժամանակ ջուղվում են և այնպիսի կտորներ, վորոնցից կարելի չի վորոշ իրեր շինել, կամ պետք կգան իրեր կարկատելու համար :

ՈՒՏԻԼԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

Ուտիլի գնահատան տեսակները գնահատան բաների համար են գործածում :

Սկսեք բրդեղենի փալասից :

Բրդեղեն փալասը տեսակավորման բաղանիք գործարան են ուղարկում : Այստեղ այդ փալասը նորից ու նորից շատ տեսակների յեն բաժանում :

Տեսակների բաժանելիս աչքի առաջ ունեն փալասի մանվածքը և գործվածքը : Սրանից հետո փալասի տեսակները ճիշտող մեքենայի յեն տալիս, այսինքն «ձաղկում են», փալասից փոշին հեռացնելու համար :

Չաղկելուց հետո փալասն անց են կացնում բուրդ մշակող «գլոդ» մեքենայով :

Բնական է, վոր այդպիսով ստացած բրդի թելերն ավելի կարճ պետք է լինեն այն թելից, ինչ թելից վոր ձգործված է յեղել կտորը :

Բրդի մի մասն այնքան մանր մագերի, աղվամազի յե բաժանվում, վոր սրանից անկարելի յե լինում թեև ստանալ, բայց ինչպես մենք հետո կտեսնենք, նրման աղվամազն այլ նպատակներն համար ե դործադրվում:

Այսպես թե այնպես, փալասից ստացած թելերի մեծագույն մասը ողտադործվում ե կտոր գործելու համար:

Շարունակենք: Ստացած արհեստական բուրդը սանդերքով զգելուց հետո խառնում են նոր բրդի հետ, իսկ այստեղից ստացած թելից արդեն գործում են բրդի կտորներ:

Բացի բրդի փալասից, գործարան են բերում նաև կիսարբդի կտորների փալաս, այսինքն այնպիսի փալաս, վորի գործվածքի մի թելը բրդեց ե լինում, իսկ մյուսը՝ բամբակեց, կամ ուրիշ բանից:

Բրդախառն փալասը «կարբոնիզացիայի» յե յենթարկվում գործարանում, այսինքն այնպես են անում, վոր փալասի վոչ բրդյա թելերը վոչնչանում են, իսկ բրդի թելերը մնում են: Սրանից հետո մնացած (բրդի) փալասի հետ վարվում են ուղիղ այնպես ինչպես վաղվում ելին բրդի փալասի հետ — ճիպտում են, գլում, սանրում ե այլն:

Արհեստական բրդի գործարան են բերում նաև զանազան տեսակ հին քուրքեր: Քուրքից կոճակները հեռացնելուց հետո, ստանձին միջոցներով վոչնչացնում են կաշին, իսկ մնացած բրդից թեև պատրաստում, կամ

ուղարկում արտասահման, վորտեղ բալական լավ գին են տալիս այս տեսակ բրդին:

Բամբակի ու քաթանի փալասն ու կտորներն ուղարկում են թղթի գործարանները, բարձր տեսակի թուղթ պատրաստելու համար:

Այստեղ փալասը յենթարկվում ե նույն գործադուլթյուններին (տեսակավորվում ե, ձաղկվում, գլղվում, սանրվում ե այլն), ինչ վոր բրդեղեն փալասը արհեստական բրդի գործարանում, հետո կտրուում են, յերկրորդ անգամ փոշուց մաքրում, իսկ վերջը նաև յեվում «կրակաթի», այսինքն կրախառն ջրի մեջ:

Կրի շնորհիվ փալասի ներկը հեռանում ե, իսկ ինքը փալասը յենթարկվում հետևյալ գործողություններին՝ լվացվում ե, սպիտակում ե այլն: Այսպիսով ստանում ենք բալական մաքուր ուտիլ, վորը խառնվում ե այլ հումուլթի հետ ե նոր միայն հանձնվում թուղթ պատրաստող մեքենային:

Հետաքրքիր ե այդ մեքենան:

Մի կողմից հեղուկ ե ածվում՝ այդ մեքենայի մեջ (վորի մեջ մեկ հարյուրերորդ մասից վոչ ավել ուտիլ ե լողում), իսկ մյուս կողմից դուրս ե գալիս բոլորովին պատրաստ, չոր թուղթ:

Այս նույն գործարաններն են բերում նաև մալուխատուրա, այսինքն հին թուղթ, վորը մանրացնում են հատուկ մեքենայով:

Թղթի ձևով ե չինվում նաև շինարարական նյութերից տոլն ու բուրբեղոյը. սրանք բալական հաջող փոխարինում են յերկաթե թիթեղին ե գործածվում կաուրներ ծածկելու համար:

Տուր թեև պատրաստվում է բրակ փալատից, բայց այդ բրակներից տեսակավորվում է, մաքրվում կոպիտ իրերից (կոճակ, վոսկոր և այլն), յուզոտ թերթերից և ուրիշ ավելորդ բաներից, վորպեսզի մեքենան և ապրանքը չփչանան:

Տեսակավորելուց հետո ուտիլը հանձնվում է «կլաբատող բաժնին», վորտեղ ուտիլը մանրացնում են, հատուկ արկղներ անում, վորպեսզի հետո ամեն մի արկղից ցանկացած չափով հանեն և իրար խառնեն:

Նույն ձևով են վարվում և խլամ փալատի հետ. դա ևս տեսակների յե բաժանվում, վորովհետեւ կարող է պատահել մի տեսակն ավելի շատ բոլորդ պարունակի, իսկ մյուսը՝ քիչ:

Տուր, ինչպես վերև հիշեցինք, գործ է անում կուտրներ ծածկելու համար և թիթեղի համեմատությամբ այն առավելութունն ունի, վոր յերբեք չի ժանգոտում, փերկի կարիք չի գգում և բավական ուշ է փչանում:

Բամբակե փալատից նոր բամբակ և ստացվում: Նա նույն վերամշակման է յենթարկվում, ինչ վոր բրդեփղեմ փալատը:

Ռեզինի արդյունաբերության գլխավոր նյութը հին բեզինն է՝ հին կրկնակոշիկներ, ռեզինե խաղալիքներ, ավտոմոբիլի շինեք և այլն, բայց սրանց մեջ առաջին տեղն են բռնում հին կրկնակոշիկները:

Հետաքրքիր է այս ուտիլի վերամշակման յեղանակը: Գործադրան բերված հին կրկնակոշիկները քանդվում են, աղատվում մետաղե տառերից, ինչպես և այլ տեսակ ռեզինե կարկատաններից:

Կրկնակոշիկներն այսպիսով քանդելուց հետո ա-

ծում են առանձին մեքենայի մեջ, վորին յերկար ժամանակ մարդ չի մոտենում:

Մեքենաներից մեկը մաքրում, լվանում է կրկնակոշիկները, յերկրորդը՝ կարատում է, մանրացնում, յերրորդը ռեզինը բաժանում բրդի մնացորդներից, նորից լվանում և այսպիսով ստացվում է բոլորովին մաքուր ռեզին:

Սրանից հետո ռեզինը նորից մարդու ձեռք է անցնում: Առանձին մեքենայով ռեզինը մամլում են, յոնդ ված դարձնում: Այս գանդվածը խառնում են արտասահմանից ստացված կաուչուկի հետ և այսպիսով ստացվում է կրկնակոշիկի իսկական ռեզին: Ամեն մի զույգ նոր կրկնակոշիկի մեջ մոտավորապես ¹/₃ մասը հին կրկնակոշիկի ռեզին է:

Նույն գործողություններին է յենթարկվում նաև այլ տեսակի ռեզինի ուտիլը:

Ամեն տեսակ վոսկոր, լինի դա յերշիկի արհեստանոցից, ճաշարաններից, աղբից թե նույնիսկ դաշտից (վորը կարծես արևի, անձրևի և ոգի ազդեցության տակ արդեն պետք է կորցրած լինեք իր արժեքը) — վերամշակվում է համապատասխան գործարաններում:

Վոսկորից շատ և շատ տեսակ իրեր են պատրաստում, իսկ այս իրերից այլ գործարաններ նոր ու նոր առարկաներ շինում. այս իրերը մարդու համար շատ մեծ նշանակություն ունեն:

Այստեղ հիշենք վոսկորից պատրաստված իրերից մի քանիսը:

1. Վոսկրածարպ — սրանից շինում են սապոն, սոսորին, գլեցերին և այլն:

2. Վոսկորի սոսինձ — ոգտադործվում է վոչ մի-
այն տան զանազան կարիքների համար, այլ և մեծ նը-
շանակություն ունի որինակ, քննդի և համի, տեք-
ստիլ, թղթի և այլ արտադրությունների մեջ:

3. Վոսկորի ալյուր — պարարտացման թանկար-
ժեք նյութ է:

4. Ժեւատին — վոչ միայն գործ ենք ածում տանը,
սննդի և համի, կամ տպագրական գործի համար, այլև
լուսանկարչության և կենտոտոգրաֆիայի մեջ:

5. Վոսկորի ածուխ — գործ է ածվում չաքարի
դործարաններում չաքար մաքրելու համար:

Վոսկոր վերամշակող գործարաններում վոսկորներ
յեկիում են մի քանի անգամ, այլում են, աղում են ջը-
րաղացներում և այլն և այդպիսով բաղմազան իրեր
պատրաստում:

Բացի վերը հիշված վոսկորի իրերից, վորոնք մեծ
մասամբ քաշով են վաճառվում, կա և ուտիլ վոսկո-
րի մի տեսակը, վորը «կրնկոսկոր» (յեղջյուրավոր ա-
նասունների վոսկորի ներքին մասը — ներբանը) և
կոչվում: Այս վոսկորը հատով է վաճառվում և սրա
համար ել յերբեմն «հաչվեվոսկոր» է կոչվում: Կրնկ-
վոսկորը կոճակեղենի գործարաններում սղոցվում է
բարակ թերթեր (պլատինկա) պատրաստվում, իսկ
այս պլատինկաներից կոճակներ են պատրաստում:
Բացի կոճակներից, այդ նույն վոսկորից պատրաս-
տում են առամի խողանակներ, դանակի կոթեր և այլն:

Մենք վերևը նկարագրեցինք, թե հիմնավորապես
ի՞նչպես են ոգտադործում ուտիլը: Բայց բանը սրա-

նով չի վերջանում. բացի դրանից շատ ֆաբրիկաներ ու
գործարաններ ել մասամբ վերամշակում են ուտիլը:
Հապարավոր տնայնագործներ ուտիլից զանազան հար-
կավոր ապրանք են պատրաստում: Խորի կտորտանքը,
վոր ըստ յերևույթին անպեք իրեր են, թվում է թե վոչ
մի բանի պեսք չեն գա, բայց այդ ել են վերամշակում:
Խորի կտորտանքը տեսակների բաժանիլուց և մաքրե-
լուց հետո քրքրում են մեքենաներով և այդպիսով ըս-
տանում այնպիսի նյութ, վորով ներքնակներ, բար-
ձեր և այլ իրեր են լցնում:

Վերջին տարիներս մեր պետության մեջ սկսեցին
ուտիլի նոր տեսակները փնտռել և սկսեցին գործածել
այնպիսի առարկաներ, վորոնք մինչև այժմ չէին ոգ-
տադործվում. որինակ՝ պահածոների սմաններ, վո-
րոնցից անագ են ստանում, ասրեստի և գալալիտի
մնացորդներ, խրոմ կաշվի կտորտանք, դարաղած
կաշվի կտորներ (չափազանց արժեքավոր արտա-
հանվող ուտիլ), կարմիր կաղնու մանր տաշեղ-
ներ, կաշվի կտորտանք, սմրակների կտոր-
տանք և ուրիշ շատ տեսակներ: Բայց ու-
տիլով հետաքրքրվող և դրադիող մարդիկ սրանով ել
չեն բավականանում. նրանք ալիլի առաջ են դնում և
փնտռում, թե արդյոք ել ուրիշ բան չկա, վոր մեզա-
նում իզուր կորչում է: Յեվ ահա հրապարակ է գալիս
կիրակիլի մնացորդները ոգտադործելու խնդիրը. այս
մնացորդները մեզանում մեծ քաղաքներում չեն ոգտա-
դործվում ինչպես հարկավոր է, մինչդեռ կարելի չի
ներանից մեծ ոգուտներ ստանալ:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՏԻԼԸ

Ինչպես տեսանք ուստիլը մեծ արժեք ունի: Վորպես հումուլթ արդյունաբերության մեջ դործ է անվաճ գանազան կերպ: Ուրեմն անկասկած է, վոր ուստիլ հավաքելու գործը կարևոր նշանակություն ունի պետության համար: Բայց ի՞նչպես ենք հավաքում ուստիլ. ահա գլխավոր խնդիրը: Ի՞նչ վիճակի մեջ է ուստիլ հավաքելու աշխատանքը մեզանում, քանի վոր նա այդքան կարևոր է պետության համար:

Պետք է առել պարզ, վոր մենք լավ չենք հավաքում ուստիլը:

Չնայելով վոր վերջին տարիներս այս ասպարիզում բավական հաջողություններ են ունեցել, վոր այժմ այնքան ուստիլ ենք հավաքում, վորի մասին մինչ հեղափոխական Ռուսաստանը զաղտփար էլ չուներ. չնայելով, վոր այժմ մեզանում կան մարդիկ, վորոնք հետևում են, թե արդյոք ուստիլն իդուր չի՞ կորչում, չնայելով այս բոլորին, բայց ե՞ս այնպես դեռևս ուստիլը լավ չենք հավաքում: Հսկայական քանակությամբ ուստիլ է մնում չհավաքված և վոչնչանում է:

Մինչև հեղափոխություն Ռուսաստանում ուստիլ՝ փալաս էլին հավաքում տարեկան 100.000 տոնն, 6 միլիոն փթից ավելի: Քաղաքացիական կռիվների տարիներին և մեր անտեսության վերականգնման առաջին շրջանում ուստիլ հավաքելու գործը բոլորովին դադարեց:

Երեց: Իսկ 1915-26 թ. 54.000 տոնն, այսինքն 3.300.000 փուլթ փալաս հավաքեցինք 5.400.000 ու. արժողությամբ: 1928-29 թ. համարյա յերեք անգամ ավելի ենք հավաքել 1925-26 թ. համեմատությամբ, այսինքն 150.000 տոնն, 9 միլիոն փթից ավելի, 18 միլ. արժողությամբ, իսկ հին թղթի և վոսկրի հետ միասին 36 միլիոն ուրբ. արժողությամբ: Այս տարիներին արտասահման ուստիլ ենք տարել 1925-26 թ. 2 միլիոն ուրբուր, իսկ անցյալ տարի արդեն՝ 9 միլ. ուրբուր:

Բայց և այնպես այս չառ և չառ քիչ է:

Մենք գիտենք ամբողջ հանրապետություններ, վորտեղ կամ բոլորովին ուստիլ չեն հավաքում, կամ այնքան քիչ են հավաքում, վոր դա մթերում չէ: Այդ հանրապետություններն են՝ Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը, Աբխազիան, Կադակստանը, Տաճիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը:

Հեռավոր արևելքում միայն անցյալ տարվանից սկսեցին ուստիլ մթերելու գործը:

Միմիայն Մոսկվայում տարեկան 5 միլիոն ուրբուր աղբ ու ավելցուկ է կորչում, վորը կամ փռում է կամ այրվում վառարաններում: Ապա ի՞նչ հսկայական քանակությամբ ուստիլ է վոչնչանում ուրիշ քաղաքներում և գյուղերում:

Արտասահմանի համեմատությամբ մենք յետ ենք մնացել ուստիլ հավաքելու գործում:

Անդլիայում 1.700.000 տոնն ծախու թղթից 600.000 տոնն կամ 35 տոկ. հավաքում են հին թղթից՝ մակուլատուրայից: Ամերիկայում տարեկան 80 միլիոն դոլլարի, այսինքն համարյա 160 միլ. ուրբուր մակուլատուրայից:

43564-13



տուրա յեն հավաքում, իսկ մեղադրում իՍՀՄ-ում չու-
կա հանված 550.000 տոնն թղթից 1927—28 թ. մակու-
լատուրա և հավաքված ընդամենը 65.000 տոնն, 2 միլ.
ոուր. արժողությամբ, այսինքն ծախու հանված թղթի
12 տոկոսը:

Գերմանիայում, վր 63 միլ. աղդարնակչություն
ունի, 1913 թվին 125.000 տոնն վոսկոր են հավաքել,
իսկ իՍՀՄ, վր 150 միլ. բնակիչ ունի, հավաքել են
ընդամենը 150.000 տոնն: Գերմանիայում դաշտերում
թափթիված վոսկորները հավաքում են բոլորը 100
տոկոսը:

Վո՞րքան զանազան տեսակ ուտիլ կարելի չե հավա-
քել իՍՀՄ -ում:

1927—28 թ. որակյան մոտավորապես մեկ միլիոն
տոնն թելից զանազան դործվածքներ էլինք պատրաս-
տում: Յեթե նույն իսկ յենթադրենք, թե սրա կեսը
մաշվում է, վորչի յե դառնում, այդ դեպքում պետք է
500.000 տոնն փալաս մշար. միջին գնով տոննը 120 ո.
հաշվելով, 60 միլ. ոուրլու փալաս կունենայինք:

1925—26 թ. ոեղինի արդյունաբերությունը չու-
կա յե հանել 25 միլիոն դույզ կրկնակոչիկներ, 600.000
հատ ավտոմոբիլների և հեծանիվների զանազան ուտին
ներ և 10.000 տոնն տեխնիքական ուտին. բոլորը միա-
սին կանի 40.000 տոնն: Յեթե այս բոլորից բոլորովին
մաշվել և վորչնչացել է դործածությունից քառորդ
մասը, այդ դեպքում մշացած պետք է լինի 30.000
տոնն հին ուտին, վորի տոննը միջին գնով 100 ոուրլի
հաշվելով, 3 միլիոն ոուրլի կստանանք:

ԻՍՀՄ-ի առևտր. ժող. կոմիտ. արած հաշվով

1928—29 թ. ամբողջ Միության մեջ կարող էլինք հա-
վաքել 325.000 տոնն վոսկոր, վորի տոննը միջին գնով
35 ոուրլի հաշվելով, 11 միլիոն ոուրլի կստանանք:

Մակուլատուրա կամ հին թուղթ հավաքելու այն
ձևը, վոր հնարավոր է Անգլիայում, յեթե գործադրենք
մեղադրում, տարեկան 190.000 տոնն կհավաքենք, տոննը
միջին գնով 30 ոուրլի հաշված, 6 միլիոն ոուրլի կլինի:

Այսպիսով աչքի առաջ ունենալով միայն ուտիլի
այս գլխավոր տեսակները, հաշված մետաղների ջար-
դը և ուտիլի ուրիշ տեսակները, մենք պետք է հավա-
քեյինք 1.045.000 տոնն, միջերման գնով 80 միլիոն
ոուրլու ուտիլ, իսկ հավաքել ենք ընդամենը 36 միլ.
ոուրլու, այսինքն կորցրել ենք 44 միլիոն ոուրլի: Յեթե
բոլոր այս կորցրած ուտիլը հավաքեյինք և արտասահ-
ման տանեյինք, ծախու գնով հաշված, 60 միլիոն ոուր-
լի (վոսկով) կստանայինք, վորով 60.000 տրակտոր
կարող էլինք առնել: Մի տարվա մեջ ուտիլի չորս հիմ-
նական տեսակներից այդքան ենք կորցրել. ինչքա՞ն
ենք կորցնում կերակրների ավելցուկներից, մետաղնե-
րի ջարդից և ուտիլի ուրիշ տեսակներից:

Ի՞նչ է այս բոլորի պատճառը:

Հիմնական պատճառը մեր անտարբերությունն է,
հաճախ մեր հանցավոր վերաբերմունքն ուտիլ հավա-
քելու գործին:

Մինչև այսօր ել հասարակության ուշադրությունը
չենք կապել ուտիլ միջերկու գործի հետ: Ուտիլ միջե-
րկու ամբողջ գործը բացառապես զանվում է հավա-
քողների ձեռքին, վորոնք գյուղերում խաբուս են գյու-
ղացիներին, փառած տանձով կամ անպետք իրերով առ-

նում են ուտիլը նրանց ձեռքից, այն էլ ամենաթանկարժեք և շահավետ ուտիլը: Գյուղի կուլակ խավերից են գյուղական շրջիկ հավաքողները, վորոնք շատ ճարպիկ կերպով ոգտադործում են այն արտոնությունները, վոր պետությունը տալիս է ուտիլ հավաքողներին: Սրանք, վորպես հակախորհրդային տարրեր, միևնույն ժամանակ հանդիսանում են վորպես շրջիկ ագիտատորներ, վորոնք գործում են ՆՍՀՄ-ի կառավարության ձեռք առած սոցիալիստական միջոցառումների հակառակ:

Քաղաքներում ուտիլի մթերման գործը մինչև այսօր էլ գտնվում է կամ այնպիսի մարդկանց ձեռքին, վորոնք բոլորովին գործին անպետք են, կամ անհուսալի արբեցողներ են, կամ քրեյական հանցավոր անցյալ ունեն, դուցե և ներկա քրեյական հանցավորներ: Այսպիսի հավաքողներին մեղանում բակերից վոնդում են, ներս չեն թողնում և հնարավորություն են տալիս ուտիլ հավաքելու միայն քաղաքներից դուրս գտնվող աղբանոցներում: Հենց այս պատճառով էլ քաղաքի բնակիչը չի մտնում, թե ի՞նչ անի հին փախս-փուլուսը և լրագրները, կամ այրում է վառարաններում կամ թափում է աղբահորերը, վորտեղ ուտիլը փոռում է և անպետքանում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵՆՔ ՈՒՏԻԼԸ

Սոցիալիստական պետության պայմաններում ուտիլի մթերման գործը կազմակերպելու ամենաաջող պայմանները կան: Աշխատավորների ամեն մի կոլլեկ-

տիվ կարող է և պարտավոր և ուտիլ մթերելու գործն այնպես կազմակերպել, վորպեսզի վոչ մի կելդգրամ ուտիլ չմնա չհավաքված և չոգտադործված:

Ի՞նչ պետք է անել այդ իրադրման համար: Մեր այս հերթական խնդիրն իրադրման համար անհրաժեշտ է վճռականապես սկսել ուտիլ մթերելու գործի վերակազմակերպությունը հասարակական այլ հիմունքների վրա:

Մինչև վոր ուտիլի մթերման գործը վերջնականապես կապահովենք նոր յեղանակներով, սկզբնական շրջանում կթողենք ուտիլ հավաքողների նախկին ապարատը, միայն թե վերին աստիճանի խնամքով պետք է մաքրենք այդ ապարատը կուլակներից և այլ հակախորհրդային և հակահասարակական տարրերից, միանգամայն պետք է հեռացնենք նրանց ուտիլ մթերելու գործից: Ուտիլ հավաքողների մնացած մասսայի համար այնպիսի միջոցներ պետք է ձեռք առնենք, վոր կարողանանք նրանցից ապագա հասարակական մթերողներ դառնալով աշխատելու համապատասխան այն հաստատությունների մեջ, վորոնց պետք է հանձնվի ուտիլ մթերելու կազմակերպված գործը:

Ուտիլի մթերումը մենք պետք է կազմակերպենք աշխատանքի նոր ձևերով:

Գյուղերում ուտիլի մթերումը պետք է կատարեն գյուղական հասարակական և կոոպերատիվային կազմակերպությունները՝ կոոպեսությունները, վարկային և սպաս. կոոպերացիաները, գյուղական փոխադարձ ոգնության բնկերությունները. խորհատեսություններն էլ կարող են մասնակցել այս գործին: Գյու-

դատնետեսության սոցիալիստական վերակառուցման այս հորը լծակները շատ հեշտությամբ կարող են կազմակերպել ուտիլ միջերկու գործը:

Այս նպատակի համար անհրաժեշտ է բացատրական աշխատանք տանել գյուղացիներին մեջ՝ բացատրել նրանց, թե ի՞նչ նշանակություն ունի ուտիլը պետության համար, ի՞նչպես պետք է հավաքել այն, ի՞նչ գին է նշանակել պետությունը դրա համար, և թե ի՞նչպես է խաբուս գյուղացուն մասնավոր միջերոգը: Հասարակական և կոոպերատիվային կազմակերպությունները պետք է հայտարարեն գյուղացիներին կամ կոյտնտեսություններին, թե այս ինչ որը (ամսվա վորոշ որերին) ուտիլ են ընդունում բնակչությանից պետության սահմանած գնով: Ուտիլն ընդունելու համար կազմակերպությունները պետք է նշանակեն մշտական բնդունողներ գյուղի չքավոր և միջակ խավերին պատկանող շրջիկ միջերոգներից: Յեթե աշխարհի միջերոգ չկա, կարելի չէ այդ գործը հանձնել և ուրիշ մարդու, վորին կարելի չէ հավատալ ուտիլ միջերկու գործը:

Ուտիլի սկզբնական միջերումն այնքան էլ դժվար գործ չէ, վոր դրա համար համապատասխան աշխատավոր չգտնենք: Դրա համար էլ ուտիլ միջերոգ բոլոր կազմակերպությունները պարտավոր են ոգնել և սովորեցնել ուտիլ միջերկու գործը կազմակերպված բնակչությանը: Որինակ՝ դաշտային վոսկորը հավաքելու համար կարելի չէ ոգտագործել դարոցական աշակերտներին և հասարակական հովիվներին: Ուտիլը հավաքելուց հետո, պետք է տանել միջերոգ կազմակերպություն պատրաստած մոտակա սահեատը, վորտեղ իս-

կույն փող կտան և կառավարիկն մշտական պայմանագիր կստան, վորի հիման վրա կանխավճար կտան միջերում կատարելու համար և, բացի միջերման հարմար սահմանված գնից, կտան և աշխատե կոչված կոմիսսիոն վարձատրություն 8—10 առկուս:

Ինչ Միության կառավարությունը մի կարևոր վորոշում է արել, վորը զգալի չափով կոժանդակի ուտիլ միջերկու գործին գյուղերում: Այս վորոշման համաձայն կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և հացահատիկների ընկերությունների միջոցով հավաքված ուտիլից ստացված գումարով տրակտորներ պետք է բերել տան արտասահմանից: Արտասահմանյան այս տրակտորները կբաժանվեն այն ուսյուններին, վորոնք ավելի աջող կերպով են իրագործել ուտիլ միջերկու գործը: Վորպեսզի բոլոր կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և հացահատիկների ընկերությունները լծվեն ուտիլ միջերկու գործին, Պետադր նրանցից ամեն մեկի հետ պայման կկապի, վորի հիման վրա յուրաքանչյուր կոլտնտեսություն, խորհտնտեսություն և հացահատ ընկերություն պարտավորված կլի նի վորոշ քանակությամբ ուտիլ միջերկու: Դրանցից վոր կազմակերպությունները, վոր կարողացան պայմանավորված քանկությունից ավելի միջերել, նրանց էլ կտրվի արտասահմանից բերված տրակտորները: Կոլտնտեսութ. և հացահատիկ ընկերությունների հարմարություն համար և ուտիլը հանձնելու գործը ավելի արագացնելու նպատակով, Պետադր զգալի չափով ընդարձակում է իր միջերոգ ցանցը և սահեատներ և հիմ-

նում համարյա ամեն մի կոլտնտես . փնջային միացություններէ մեջ :

Ուտիլ մթերելու դործում գյուղ տեղերում մեծ ոգնութիւն կարող են ցույց տալ գեղջկուհիները, վորոնցից ամեն մեկն ուտիլ համաքում ե իր տանը : Ծառ հա վանական ե , վոր շատ կորսնտեսություններում հենց իրենք գեղջկուհիները հանձն առնեն ուտիլ մթերելու դործը :

Կոմյերտականները ե կուսակցականները գյուղում կազմակերպող ու գեկալարող զեր պետք ե կատարեն ուտիլ մթերելու համար դործ դրված հասարակական կարևոր միջոցառումների հանդեպ :

Քաղաքներում ե Փարբիկա-դործարանային վայրերում, վորտեղ առանձնապէս շատ ուտիլ ե վոջնանում, աղբի հավաքումը պետք ե այնպէս կազմակերպել, վոր այդ տեղերի բնակիչները շատ մեծ հարմարություններ ունենան այդ ասպարեզում :

Անհրաժեշտ ե , վոր ամեն մի բնակարանում խոհանոցում, միջանցքում կամ խոհանոցի առաջը յերկու բաժանմունքից բաղկացած մի արկղ դնեն, վոր վերեւից ե տակից ծածկոցներ ունենա . մի բաժանմունքում պետք ե վոսկոր հավաքեն, իսկ մյուսում՝ ամեն տեսակ ուտիլ, բացի սննդեղէնի մնացորդներից : Ծածկոցները պետք ե պինդ ու հուպ կալած լինեն, մանավանդ տակի ծածկոցը, վորովհետեւ հակառակ դեպքում արկղի մեջ հավաքված ուտիլի ծանրութիւնից ծածկոցը կարող ե լացվել ե ուտիլը կթափվի գետնին, վոր միանգամայն անթույլատրելի յե : Ամեն որ տան տերերն ուտիլն այս արկղներից պետք ե հավաքեն բակի ընդհանուր արկղը

ների մեջ, վորի համար պետք ե հատուկ մի մարդ լինի նշանակված . կարելի յե ոգտագործել ե տնային աշխատավորներին լրացուցիչ վարձատրությամբ :

Բնակարաններից ուտիլը բազի ընդհանուր արկղները թափելու համար հատուկ նշանակված բանվորներ պետք ե ունենան տոպրակներ : Մշակում են տոպրակների միատեսակ մի տիպ, ե շուտով մեծ քանակությամբ կապտարատվեն այդ տեսակ տոպրակներից : Բայց ե այնպէս քաղաքի աղգարնակչութիւնը հենց այժմ կարող ե սկսել ուտիլի մթերումը . դրա համար կարող են ոգտագործել հին դուլլեր, արկղներ, կողովներ, վորոնցից ամեն բնակարանում ել կան :

Բակի արկղներին փոխարեն կարելի յե ոգտագործել ե փոքրիկ մթերանոցներ, մի փոքրիկ անկյուն ցախանոցներում, կամ մի այլ շինութիւն, վորտեղ կարելի յե ուտիլը տեղափոխել խորի մեծ-մեծ տոպրակներով կամ ուրիշ եօթնագին կապոցներով : Յեթե տանտերը այդ տոպրակներից չունի, կարող ե ստանալ ուտիլ մթերող կազմակերպութիւններից : Ուտիլ հավաքելու տեղը ընտրելիս անհրաժեշտ ե աչքի առաջ ունենայ այն հանգամանքը, վոր, վորքան կարելի յե, հնարավոր լինի մոտ կանգնեցնել բեռնակիր ավտոմոբիլներն ու սայրերը, վորպեսպէս ստիպված չլինեն մարդիկ յերկար տարածութիւն կրելու ուտիլը : Յերբ մոտավորապէս կես տոնն ուտիլ կլինի հավաքված, տանտերը պետք ե իմաց տա մթերող կազմակերպութիւնը, վորը 2—3 օրվա ընթացքում կտանի հավաքված ուտիլը ե կվճարի դրա համար պետութիւն սահմանած գինը, կամ թե տան տիրոջ հետ կապած պայմանագրի համաձայն,

փողը նրա հաշվին կմտցնի խնայողական դրամարկղ-
յերի ու դեպքումն էլ անդորրագիր կտա, վոր ուտիլ և
ստացված: Այս անդորրագրերը պետք է պահել, վո-
րովհետև ապագայում այն տնտեսները, վորոնք լավ
կազմակերպած կլինեն ուտիլի մթերման դործը, մրցա-
նակի կարժանանան:

Ամեն մի քաղաքում, վորտեղ ուտիլ մթերող կազ-
մակերպությունը պահեստ ունի, տնտեսներին կհա-
տարարվի կազմակերպության հասցեն և հեռախոսի
համարը, ուր պետք է դիմեն և պահանջեն, վոր ուտիլը
տարվի: Յենթադրվում է, վոր ամեն մի տնտեսի հետ
առանձին պայմանագիր կկապեն, վորի մեջ ճշտու-
թյամբ կհիշվեն ուտիլ մթերելու և ծախելու բոլոր
պայմանները:

Արկղներ սարքելու համար արած բցոր սկզբնական
ծախսերը շատ շուտով կծածկվի, և տնտեսները վոչ
միայն կկարողանան վարձատրել բնակարաններից ու-
տիլ հավաքող բանվորներին, այլ և լրացուցիչ միջոց-
ներ կունենան, վոր կարող են ոգտագործել տան կրթա-
կան-կենցաղական կարիքների համար: Այս պատճառով
էլ տներում ուտիլ մթերելու գործի կազմակերպու-
թյունը պետք է հանձն առնեն կրթական-կենցաղական
հանձնաժողովները: Գործոն մասնակցություն կարող
են ցույց տալ այս գործում տանտիկիները, վորոնք և
բնակարանային ընկերությունների մեջ ուտիլի առա-
ջին մթերողները կլինեն: Սրանց դեպի ուտիլը ցույց
տված խնամատար վերաբերմունքից է կախված այս
կարևոր խնդրի լուծումը: Ուտիլը հավաքելու տան-
տիկիները պետք է աշխատեն, վոր տան տնտեսության

աղբը, հնար յեղածին չափ, չկեղտոտվի և չյուղոտվի:
Այս բանը շատ կարևոր է, նամանավանդ հին թղթի,
լրագրի, կարտոնի նկատմամբ, վորովհետև յուղոտ-
ված թուղթը չի կարելի ոգտագործել թղթի արդյունա-
բերության համար:

Պիոներներն էլ կարող են մեծ մասնակցություն
ցույց տալ ուտիլ մթերելու գործում: Մի ընդարձակ
տան կամ հարևան մի քանի փոքրիկ տների պիոներ-
ները կարող են միանալ և մի առանձին ուտիլային
բջիջ կազմել, վորը կկազմակերպի ուտիլ մթերելու
գործը: Դրանք պետք է ունենան մի մարդ, վոր բնա-
կարանների բջիջներից ուտիլը հավաքի: Բայց կարելի
յե և առանց այդ մարդու յե: այս դեպքում այս կամ
այն բնակարանում աղբող պիոներն ինքը պետք է ու-
տիլը տանի բակի ընդհանուր արկղը կամ վորջված
հատուկ պահեստը: Չպետք է վախենալ, թե ուտիլ
հավաքելու պիոներները վարակիչ հիվանդություննե-
րով կարող են վարակվել: Չի յեղել մի դեպք, վորց ան-
միջապես ուտիլ հավաքող կամ տեսակափորող մարդ-
կանցից մեկը հիվանդանալ վորևե վարակիչ հիվան-
դությունով:

Պիոներները ձեռքով կատարված մթերումը մեծ աղ-
բեցություն կունենա և տանտիկիները վրա այն տեսա-
կետից, վոր վերջիններս ուտիլը շատ չեն կեղտոտի:
Այսպիսով այլևս կարիք չի լինի հատուկ մարդ վար-
ձելու, և պիոներները իրենց բջջի համար ամսական
30—35 ռուբլի կխնայեն, այդ խնայողությունը մի-
միայն Մոսկվայում տարեկան յերկու միլիոն ռուբլուց
ավելի գումար կտա պիոներական չարժման համար:

Ամեն մի գործարանում, ֆաբրիկայում, արհեստանոցում և այլ հաստատություններում ու ձևոնարկութուններում պետք և հատուկ մարդիկ լինեն նշանակված, վորոնք պետք և հետեւն ուտիլ մթերելու գործին: Մեծ հաստատություններում անհրաժեշտ և նշանակել հատուկ մարդիկ այդ գործի համար և վարձով, փոքր արհեստանոցներում և այլ հաստատությունում այս գործը կարելի չե հանձնել այս կամ այն բնակրոջը, վորպես հաստատական աշխատանք:

Այս տարի ուտիլ մթերելու գործին մեր հաստատություններ մեծ ուշադրութուն և դարձնում: Շատ քաղաքներում և շրջաններում ամիսներ ու շաբաթներ են նվիրում և կնիքներն ուտիլ մթերելու գործին: Մոտկ վայում ուտիլի ամսականը կսկսվի հունվարի 10-ից: Այս գործին զլխավորապես ըծելու չեն կոմիտեաներին: Մոտկվայի ամեն մի միլիցիական բաժին կունենա իր յնըրյակները, վորոնցից ամեն մեկը կկազմակերպի ուտիլ հավաքելու գործը 50—60 տան շրջանում: Այս ամսականը հաստատական ուշադրութունը կզբաղի ղեպի ուտիլ մթերելու գործը և խթան կլինի սխտեմատիկորեն հավաքելու ուտիլը:

Յեթե մեզանից ամեն մեկն իր ընտանեկան կյանքում որական մի բոլե նվիրի ուտիլ մթերելու գործին, բնակչության բոլոր ազգը կհավաքվի, կազմագործվի, և մեր անանսությունը տասնյակ միլիոնների լրացուցիչ հումուլթ կտանա արդյունաբերության համար և արտահանելու:

Ուտիլ մթերելու գործում կուսակցականները, կոմ-

յերիաները և անկուսակցական ակտիվիստները ղեկավար ղեր պետք և հանձն առնեն:

Ընդհանուր ուշադրով, թե հաստատական և թե մթերողների համերաշխ աշխատանքով, ուտիլ հավաքելու գործը կդնենք նորմալ պայմանների մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	յերես
Ինչ ե ուտիլը	3
Ուտիլի մթերումը և տեսակավորումը	6
Ուտիլի արդյունաբերական վերամշակումը	9
Խնչակա ենք հավաքում ուտիլը	16
Խնչակա պետք ե հավաքենք ուտիլը	20





ՀՀ Ազգային գրադարան



NL0282066

10x

14.030

1301

6. Pl

8m 1